49-ՐԴ ՆԻՍՏ

18 դեկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 7-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, արտաքին գործոց, ֆինանսների, լուսավորության մինիստրները և պետական կոնտրոլյորը:

Սոց. դեմ[ոկրատների] ֆրակցիան հարց է բարձրացնում կառավարության կողմից Սանահին գնացող պատգամավորության վերաբերմամբ, այսինքն՝ կա-

ռավարությունը չպիտի պատգամավորներ նշանակի խորհրդարանի անդամներից, իսկ եթե գնացողները լինելու են անպայման խորհրդարանի անդամներ, նոքա պետք է ընտրվեն խորհրդարանից:

Այդ առթիվ վեճ է սկսվում, թեր ու դեմ խոսում են *Վրացյան, Ազատյան, Ավդալբեկյան, Խոնդկարյան, արտաքին գործոց մինիստրը:*

Քվեարկվում է սոց. դեմ. ֆրակցիայի առաջարկությունը և չի ընդունվում:

Դ. Զուբյան - Խմբագրական հանձնաժողովի կողմից կարդում է անցյալ նիստերին ընդունված օրինագծերը խմբագրված ձևով, որոնք և վերջնականապես հաստատվում են խորհրդարանի կողմից:

Ֆինանսների մինիստր - Բացատրում է յուր ծրագիրը արդյունաբերության ու տնտեսության վերականգնման վերաբերյալ:

Արդյունաբերության ու առևտրին մեծ հարված են տալիս ռեկվիզիցիան և մոնոպոլիան: Առևտրին վնասում է նույնպես և բանկերի անգործությունը, որի հետևանքով և ժողովրդի հավատն է կորչում բանկերի վերաբերմամբ, ուստի և փող չի մտցնում բանկը: Մոտ օրերս հնարավորություն կտանք բանկերին՝ ընթացիկ հաշվով մտած փողեր բաց թողնել ժողովրդին:

Արդյունաբերության համար ամեն հարմարություններ ունենք՝ հում նյութեր, ջրի էներգիա և այլն:

Անհրաժեշտ է բանալ ծխախոտի և այլ գործարաններ՝ ակցիզը ստանալու, պարապ ու անգործ բազմաթիվ աշխատող ձեռքերին աշխատանք տալու համար: Գինու ակցիզը ահագին կլիներ հանդեպ այն կարծեցյալ օգուտի, որ ունի դոշաբ կոչվածը:

Մաքսային քաղաքականությունն էլ այնպես պիտի լինի, որ մեր երկրի կարիքները հոգացող ապրանքների վրա շատ քիչ մաքս դրվի, բացառությամբ շռայլության իրերի, որոնց վերաբերմամբ պետք է, ընդհակառակը, լինել անողոք ու անխնա:

Հատուկ դպրոցներ պետք է բաց անել բանվորներ պատրաստելու համար:

15 րոպե ընդմիջում

Մինիստր-նախագահ - Կարդում է ֆրոնտից ստացված հեռագիրները, որոնք շեշտում են մեր զորքերի տարած հաղթություններն ու առհասարակ հաջողությունները:

Ռ. Տեր-Մինասյան - Ֆինանսական հանձնաժողովի կողմից զեկուցում է բյուջեի մասին:

Նկատի ունենալով, որ այդ օրինագիծը չի քննված ֆրակցիաներում, միաձայն որոշվում է հետաձգել քննությունը մի քանի օրով:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 11-ին:

«Զանգ», 12 հունվարի 1919թ.